

**«Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» ծրագիր
Խորհրդատվական ծառայություններ, Գենդերային հարցերի և սոցիալական ներառման մասնագետ IRFSP/TA/CQS-
2020/011**

Հայաստանի Հանրապետությունը /այսուհետ՝ Փոխառու/ փոխառություն է ստացել Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամից /այսուհետ՝ ԳԶՄՀ/ "Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն" Ծրագիրը /այսուհետ՝ ԵԳՖԱԾ / իրականացնելու համար և նպատակ ունի գումարների մի մասն օգտագործել սույն խորհրդատվական ծառայությունները ձեռք բերելու համար:

ԵԳՖԱ ծրագրի նպատակն է բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական կարգավիճակն ընտրված գյուղական տարածքներում, որտեղ աղքատությունը տարածված է, ստեղծելով եկամուտների աճի և զբաղվածության ապահովման կայուն հնարավորություններ՝ գյուղատնտեսական արտադրության համակարգերի և ապրանքային մշակաբույսերի արտադրության արժեզրեայի օղակների միջև առաջընթաց ու հետընթաց կապերի հզորացման ճանապարհով:

ՀՀ ԷՆ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը փնտրում է բարձր որակավորում ունեցող և մոտիվացված խորհրդատուի ԵԳՖԱԾ-ի շրջանակներում գենդերային և սոցիալական ներառման մասնագետի հաստիքի համար:

Խորհրդատվության ընդհանուր նպատակն է Ծրագրի իրականացման վերջին 2 տարիների ընթացքում առավելագույնի հասցնել և էլ ավելի ամրապնդել ձեռքբերումները գենդերային հավասարության, երիտասարդների զբաղվածության և սոցիալական ներառման ոլորտում:

Խորհրդատուի հիմնական պարտականություններն են՝

ԳՏՏԶ ԾԻԳ-ի տնօրենի ընդհանուր վերահսկողության ներքո ծրագրի գենդերային և սոցիալական ներառման մասնագետն աշխատանքները կիրականացնի հետևյալ վեց հիմնական ոլորտներում.

Ա. Ծրագրի իրականացում.

- Ծրագրի ղեկավարին, ԾԻԳ-ի մյուս անդամներին և ոլորտի պատասխանատուներին տրամադրել խորհրդատվություն և ցուցաբերել աջակցություն ծրագրային աշխատանքներում թիրախավորման, գենդերային և սոցիալական ներառման արդյունավետ ներգրավման գործում,
- Սերտորեն համագործակցելով ԾԻԳ-ի անդամների հետ՝ համակարգել Ծրագրի գենդերային և երիտասարդության հարցերով գործողությունների պլանի իրականացումը (GYAP՝ 2020 թ. հոկտեմբերի տարբերակ): Յուրաքանչյուր եռամսյակ ԾԻԳ-ին զեկուցել առաջընթացի մասին, ժամանակին բարձրաձայնել մարտահրավերների և լուծման ենթակա խնդիրների մասին:
- Աշխատել ԾԻԳ-ի բոլոր բաղադրիչների, այդ թվում՝ ԳԷՀ-ի բաղադրիչի մասնագետների հետ՝ մշտապես ուսումնասիրելու, թե յուրաքանչյուր բաղադրիչ կամ ենթաբաղադրիչ ինչպես է անդրադառնում գենդերային հարցերին, և գտնել ծրագրի իրականացումը գենդերային տեսանկյունից բարելավելու հնարավորություններ,
- Մշտապես կարծիք հայտնել և առաջարկություններ կատարել այն մասին, թե ինչպես կարելի է հասնել ծրագրի հնարավոր լավագույն արդյունքներին՝ թիրախավորման, գենդերային հավասարության և կանանց հզորացման ու սոցիալական ներառման տեսանկյունից,
- Ապահովել, որ թիրախավորման և գենդերային հարցերի/երիտասարդության հետ կապված աշխատանքներն արտացոլվեն ծրագրի Տարեկան աշխատանքային պլանի և բյուջեի կազմման գործընթացում, ծրագրի ՄնԳ համակարգում և արձանագրվեն ծրագրի առաջընթացի հաշվետվություններում,
- Մասնակցել ծրագրի տարբեր բաղադրիչների շրջանակներում ծառայություն մատուցող միջազգային, ազգային և տեղական ընկերությունների համար մանրամասն ԱՊ-ների և մրցութային փաստաթղթերի մշակմանը՝ բոլոր բաղադրիչներին թիրախային խմբերի արդյունավետ մասնակցությունը և ծրագրի թիրախների իրականացումն ապահովելու նպատակով: Ապահովել, որ ԳԶՄՀ-ի Սոցիալական, շրջակա միջավայրի և կլիմայի գնահատման ընթացակարգերը (ՄՇՄԿԳԸ, SECAP) պատշաճ կերպով, խստորեն պահպանվեն և հարգվեն յուրաքանչյուր ծրագրային (այդ թվում՝ ԳԷՀ-ի կողմից ֆինանսավորվող) միջոցառում իրականացնելիս,
- Ապահովել, որ գենդերային հարցերի/երիտասարդությանն ուղղված համապատասխան ծրագրային աշխատանքների ԱՊ-ներում նշված լինի առնվազն (i) կանանց/ երիտասարդության մասնակցության, աղքատության պրոֆիլի նվազագույն և թիրախային տոկոսները, (ii) թիրախների իրականացման համար անհրաժեշտ հատուկ աշխատանքները, (iii) մասնակցության վերլուծությունը՝ ըստ սեռի/երիտասարդության/ աղքատության պրոֆիլի, ինչպես նաև (iv) ըստ սեռի/երիտասարդության/աղքատության պրոֆիլի

տարանջատված օգուտները/մարտահրավերները և քաղած դասերը՝ համաձայն ծրագրի նախագծի և տրամաբանական հենքի թիրախների,

- Պայմանագրի կնքումից հետո մեկ ամսվա ընթացքում իրականացնել գենդերային հարցերի և երիտասարդության վրա COVID-19-ի ազդեցության արագ գնահատում:

Բ. ՄևԳ, սոցիալական ներառման վերաբերյալ գիտելիքների կառավարում

- ՄևԳ/գիտելիքների կառավարման մասնագետի հետ միասին ապահովել, որ ՄևԳ համակարգն արտացոլի տարանջատված տվյալներ սեռի, երիտասարդության և սոցիալական ներառման վերաբերյալ: Բացի այդ, ներառել այնպիսի պարամետրերի վերլուծություն, ինչպիսիք են ազդեցությունը կանանց/տղամարդկանց/երիտասարդների/ աղքատության պրոֆիլների վրա տնտեսական հզորացման, որոշումների կայացման և աշխատանքային ծանրաբեռնվածության տեսանկյունից, երիտասարդների համար ստեղծված զբաղվածության վերլուծություն և այլն,
- Մերտորեն համագործակցելով ՄևԳ մասնագետի հետ՝ մասնակցել բոլոր ուսումնասիրությունների, հետազոտությունների, այդ թվում՝ Ծրագրի ազդեցության վերջնական գնահատման, արդյունքների հետազոտությունների և այլ ուսումնասիրությունների համար ԱՊ-ների կազմմանը (համաձայն ԳՁՄՀ-ի ուղեցույցների)՝ նշելով առնվազն այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են ընտրանքի ձևավորման մոտեցումներում կանանց, երիտասարդների և աղքատության պրոֆիլների տոկոսը, ներառյալ մասնակցությունը ցածր լինելու դեպքում որոշ խմբերից 100% ընտրանքի ձևավորում (օրինակ՝ որոշ վարկային սխեմաների դեպքում բոլոր շահառու կանայք),
- Մշակել և տարածել ՄևԳ, ուսուցողական և հաղորդակցման նյութեր,
- Ստեղծել առնվազն երկու գիտական արտադրանք, որոնցից մեկը սեռի, մյուսը երիտասարդության վերաբերյալ՝ հիմնվելով ծրագրային փորձի վրա և անհրաժեշտության դեպքում անցկացնելով լրացուցիչ ֆոկուսխմման քննարկումներ:

Գ. Կարողությունների զարգացում

- Կատարել կարողությունների պարբերական և նպատակային գնահատում գենդերային/երիտասարդության և սոցիալական ներառման խնդիրների վերաբերյալ,
- Կիրառելի լինելու և անհրաժեշտության դեպքում ապահովել կարողությունների զարգացում ԾԻԳ-ի աշխատակազմի, իրականացնող գործընկերների, ծառայություն մատուցողների և շահառուների համար:

Դ. Հաղորդակցում

- Կապ հաստատել ԳՁՄՀ-ի հայաստանյան ծրագրի և գենդերային հարցերով զբաղվող թիմերի հետ՝ իրականացման, գիտելիքների փոխանակման և այլ ասպեկտներում գենդերային հարցերի վերաբերյալ,
- Միջնորդ հանդիսանալ ծրագրի և կառավարությունում, իրականացնող կառույցներում, զարգացման այլ ծրագրերում ու ԳՁՄՀ-ում գենդերային խնդիրների ոլորտում աշխատող անձանց միջև հաղորդակցության համար,
- Օգնել ԾԻԳ-ի անձնակազմի համար գենդերային հարցերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների հասանելիություն ապահովելու հարցում և տեղեկացնել լավագույն փորձի մասին,
- Հավաքել և ներկայացնել ապացույցների վրա հիմնված տեղեկություններ գենդերային հավասարության, կանանց հզորացման և երիտասարդության ներառման լավագույն փորձի վերաբերյալ:

Ե. Իրազեկում և կապերի հաստատում

- Կապեր հաստատել գենդերային, կանանց կամ սոցիալական ներառման ուղղված այլ ծրագրերի հետ, որոնք իրականացվում են ազգային, միջազգային և միջպետական կառույցների կողմից,
- Ներկայացնել ապացույցների վրա հիմնված տեղեկություններ գենդերային հավասարության և կանանց հզորացման լավագույն փորձի վերաբերյալ և տարածել դրանք համապատասխան ֆորումներում,
- Կատարել կարողությունների պարբերական գնահատում գենդերային և սոցիալական ներառման խնդիրների վերաբերյալ և ապահովել կարողությունների զարգացում դաշտային այցելությունների մակարդակով ԾԻԳ-ի աշխատակազմի, իրականացնող գործընկերների և ծառայություն մատուցողների համար:

Զ. ԳՁՄՀ Սոցիալական, շրջակա միջավայրի և կլիմայի գնահատման ընթացակարգեր (ՄՇՄԿԳԸ, SECAP) և ԳՁՄՀ քաղաքականություն սեռական ոտնձգությունը, սեռական շահագործումն ու բռնությունը կանխելու և դրանց արձագանքելու վերաբերյալ

- Օգնել Ծրագրի աշխատակիցներին, որպեսզի տեղյակ լինեն և խստորեն հետևեն ՄՇՄԿԳԸ-ի սոցիալական կողմերին և սեռական ոտնձգությունը, սեռական շահագործումն ու բռնությունը կանխելու և դրանց արձագանքելու վերաբերյալ ԳՁՄՀ-ի քաղաքականությանը: Դրանց խստորեն պահպանումը պետք է տարածվի ԵԳՖԱՕ-ի բոլոր աշխատանքների վրա: Արձանագրել ծրագրի բոլոր աշխատանքները՝

ուղղված ՄՇՄԿԳԸ պահանջների բավարարմանը, և ապահովել, որ համապատասխան սոցիալական և շրջակա միջավայրի մոնիտորինգի տվյալները ներառվեն ծառայություն մատուցողներին (խորհրդատուներ, հասարակական կազմակերպություններ, խորհրդատվական ընկերություններ և այլն) ներկայացվող հաշվետվական պահանջներում,

- Մերտորեն համագործակցելով ԾԻԳ-ի և ՄՆԳ մասնագետի հետ՝ ապահովել, որ ազդեցության վերջնական գնահատումը, բացի համապատասխան Արդյունքների և ազդեցության կառավարման համակարգից (ԱԱՀԿ, RIMS), ներառի նաև որոշ լրացուցիչ ցուցանիշներ, որոնք կարտացոլեն ծրագրի առաջընթացը և ԵԳՖԱԾ-ի սոցիալական և շրջակա միջավայրի վրա ազդեցությունները:
- Մերտորեն համագործակցել ԳԶՄՀ-ի գլխավոր գրասենյակի ՄՇՄԿԳԸ/սոցիալական ներառման փորձագետների հետ՝ ծագած ցանկացած խնդրի լուծման համար:

Ընտրության չափանիշները և միավորները հետևյալն են՝

Չափանիշ	Միավոր
Մագիստրոսի կոչում սոցիալական գիտությունների, գենդերային հարցերի կամ առաջադրանքին առնչվող այլ համապատասխան բնագավառում	10
Միջազգային կազմակերպությունների հետ աշխատանքի առնվազն երկու տարվա փորձ	5
Գենդերային և սոցիալական ներառման, այդ թվում՝ երաշխիքների ոլորտում առնվազն երեք տարվա փորձ, որից առնվազն 2-ը՝ Հայաստանում,	30
Միջազգային, դոնոր, բարեգործական և զարգացման կազմակերպությունների հետ համագործակցության փորձ,	5
Ցուցադրական և տեղեկատվական նյութերի մշակման ու ներկայացման հմտություններ,	5
Գյուղական զարգացման վերաբերյալ հիմնավոր պատկերացում, մասնակցային գործընթացների և մեթոդների հետ աշխատանքի, շահագրգիռ կողմերին տրամադրված խորհրդատվության, համատեղ կառավարման, գենդերային և երիտասարդության/սոցիալական ներառման ոլորտում ապացուցելի փորձ,	35
Հայերենի և անգլերենի գերազանց իմացություն (բանավոր և գրավոր), երկու լեզուներով գերազանց հաղորդակցվելու կարողություն,	5
Microsoft Office-ի (Word, Excel, Power Point, և այլն) իմացություն, համացանցից օգտվելու հմտություններ:	5

Ծրագիրը իրականացնելու նպատակով ԾԻԳ-ը հրավիրում է իրավասու խորհրդատուներին ներկայացնելու իրենց հետաքրքրության հայտերը, որպեսզի մասնակցեն առաջիկա մրցույթին վերոնշյալ ծառայությունների մատուցման համար:

Ծառայությունների տևողություն՝ 12 ամիս, երկարացման հնարավորությամբ՝ կախված աշխատանքի արդյունքներից և բյուջեի առկայությունից:

Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն՝

- Դիմում ԾԻԳ-ի տնօրենի անունով;
- Ինքնակենսագրական սեղմագրեր (CVs) անգլերեն և հայերեն լեզուներով, որոնք ներառում են տեղեկատվություն Ծառայությունների իրականացման համար պահանջվող որակավորման և համապատասխան փորձի վերաբերյալ:

Ընտրության եղանակն է՝ Ընտրություն Խորհրդատուի Որակավորման հիման վրա (CQS)

Խորհրդատու ընտրվելու է ԳԶՄՀ-ի կողմից 2010թ. /<https://www.ifad.org/documents/10180/cd15e696-26e2-45df-abcc-3d4611a9a20b/> սեպտեմբերին հրապարակված Գնումների ուղեցույցով և ձեռնարկով սահմանված ընթացակարգերի համաձայն: Առաջադրանքի պայմանները հրապարակված են <https://raed.am/procurement/adstatements.html> կայքում: Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք գրել procurement@raed.am հասցեով ժամը 09.00-18.00:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2020թ. Դեկտեմբերի 02-ը, ժ.18.00:

ՀՀ ԷՆ “Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ” ՊՀ

Տնօրեն՝ Աշոտ Վարդանյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 4,6 հարկ;

Հեռախոս / Ֆաքս՝ 374 10 – 54 – 65 -10; e-mail: procurement@raed.am